ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2025/L-61

ք. Երևան «____» _____ 2025 թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Ն. Մակարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **էլեկտրոնային ռեգիստրի սպասարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **22 200 000 (քսաներկու միլիոն երկու հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011049252
ՀՎՀՀ 02882913
հեռ. 010 59-60-21
էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

_____ Ա. Ֆիդանյան
/ ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար/
(ստորագրություն) Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474604404120000
ՀՎՀՀ 02679378
Հեռ. +374 44 001200
Էլ. Հասցեն՝ info@sempire.net

_____ Ն. Մակարյան
/տնօրեն/
(ստորագրություն) Կ.Տ

Digitally signed by
MAKARYAN NORIK 1110930445
Date: 2025-06-18 18:48:33

Հավելված N 1
« » 2025 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2025/L-61 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանում	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	մատուցման		
							հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	***72411800/2***	***Էլեկտրոնային ռեգիստրի սպասարկում***	***Ըստ հավելվածի***	դրամ	22 200 000	1	Ք. Երևան Ծովակալ Իսակովի 9	1	*Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օր հետո, մինչև 2025 թվականի դեկտեմբերի 20-ը, մինչև ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:*

Հավելված

1. Տեխնիկական բնութագիր

ՀՀ ՆԳՆ ՀՔԾՄԹԼ վարչության ծրագրային, տեխնիկական և խորհրդատվական /Էլ.ռեգիստրի/ սպասարկման աշխատանքների կատարման վերաբերյալ

1. Սպասարկումը պետք է իրականացվի 24/7 ռեժիմով շուրջօրյա, պատվիրատուի կողմից տրամադրված աշխատատեղում:
2. Թարմացումները պետք է տրամադրվեն ծրագրային թարմացման փաթեթի տեսքով, թեստային միջավայրում փորձարկելուց հետո և տեղադրվեն սպասարկողի կողմից կից ներկայացնելով փաթեթի մանրամասն նկարագիրը:
3. Թեստային միջավայրը պետք է ապահովի սպասարկողը:
4. Թարմացման փաթեթները պետք է ունենան ապատեղադրման մեխանիզմ:
5. Համակարգերի աշխատունակությունը և սպասարկումը պետք է ապահովվի անընդհատության սկզբունքով /non-stop/:

ՀՀ ՆԳՆ ՀՔԾՄԹԼ վարչության տեղեկատվական-փնտրողական ավտոմատացված CRM համակարգը ծառայում է ՀՀ ՆԳՆ ՀՔԾՄԹԼ վարչության կողմից օրենքով նախատեսված գործառույթների իրականացման խնդիրներին: Համակարգի ներդրումը սկսվել է 2012 թ. ապրիլից և ներկա պահին այն իր մեջ ներառում է հետևյալ ռեգիստրները, ենթահամակարգերը և տվյալների փոխանակման ենթաբաղադրիչները՝

- Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների(ԱՄՏ) Էլեկտրոնային ռեգիստր,
- Վարորդական Վկայականների (ՎՎ) Էլեկտրոնային ռեգիստր,
- Արտասահմանյան համարանիշերով տրանսպորտային միջոցների կողմից ՃԵԿ խախտումների վարչական վարույթների հաշվառման ենթահամակարգ
- ՀՀ ՆԳՆ ՀՔԾՄԹԼ վարչության ՀՔԲ-ների կողմից արձանագրված վարչական իրավախախտումների մուտքագրման ենթահամակարգ
- ՎԻ – որոշումների կառավարման և վճարումների նույնականացման ենթահամակարգ
- Ինտեգրված համակարգերի և ՀՀ ՆԳՆ ՀՔԾՄԹԼ վարչության – տեղեկատվությունների փոխանակման կենտրոնացված մոնիտորինգի ենթահամակարգ
- ՀԿԱԾ - ՀՀ ՆԳՆ ՀՔԾՄԹԼ վարչության տվյալների փոխանակման ենթաբաղադրիչ,
- ԱՊՊԱ մասին տեղեկությունների փոխանակման ենթաբաղադրիչ
- ԲՊՌ և Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի հետ տեղեկությունների փոխանակման ենթաբաղադրիչ
- «Բալային համակարգ»-ի տեղեկությունների փոխանակման ենթաբաղադրիչ

2. Աշխատանքների ընդհանուր նկարագրությունը

2.1 ԱՏՄ Էլեկտրոնային ռեգիստրի համակարգ

Հիմնական գործառույթներ՝

- Հայաստանի Հանրապետություն ներմուծված ԱՏՄ սեփականության իրավունքի գրանցում և հաշվառում,

- Հաշվառված ԱՏՄ նկատմամբ փոփոխությունների գրանցում,
- ԱՏՄ հաշվառման գործնթացում շահագործողի կցում և ներմուծում բալային համակարգ:
- Համարանիշների կառավարում
- ԱՏՄ նկատմամբ գրավի, կալանքների և արգելանքների կիրառում,
- Գրանցված ԱՏՄ-ների մասին հաշվետվությունների ներկայացում
- ՀՀ ՆԳՆ ՀՔԾՄԹԼ վարչության հաշվառման-քննական ստորաբաժանումների կողմից իրականացված գործողությունների մասին հաշվետվութիների ներկայացում
- Պետական այլ շահագրգիռ գերատեսչություններին ԱՏՄ-ների մասին տվյալների տրամադրում:

2.2 ՎՎ էլեկտրոնային ռեգիստրի համակարգ

Հիմնական գործառույթներ՝

- Վարորդական վկայականների տրամադրում և փոխանակում,
- Վարորդական տեսական և գործնական քննությունների ընդունման գործընթացի կազմակերպում էլեկտրոնային եղանակով,
- այլ համակարգերին ՎՎ տվյալների տրամադրում էլեկտրոնային եղանակով:

2.3 Արտասահմանյան համարանիշերով տրանսպորտային միջոցների կողմից ՃԵԿ խախտումների վարչական վարույթների ռգիստր

Հիմնական գործառույթներ՝

- Սահմանային Էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգից վարույթի շրջանակներում վարորդների վերաբերյալ տվյալների ստացում
- կազմված վարչական որոշումների հաշվառում, բողոքարկման, կարճման , տարժամկետման և օրենքով նախատեսված այլ գործառույթնե-րի մասին տեղեկությունների գրանցում ու սահմանային անցակետերում ծանուցում իրականացնելու նպատակով տվյալների փոխանցում ՍԷԿՏ համակարգ
- տուգանքների վճարումների վերաբերյալ տվյալների ստացում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգից, դրանց մշակում և նույնականացում:

2.4 ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ ՎԳ և ԲՔ վարչության կողմից արձանագրված վարչական իրավախախտումների մինչև 2023թ. -ի գործող համակարգեր

Հիմնական գործառույթներ՝

- ՎԻ արձանագրության մուտքագրում, Անձի և ՏՄ-ի իդենտիֆիկացում Էլեկտրոնային ռեգիստրի համակարգում
- Օգտվողների և Պաշտոնների կառավարում
- Խախտման ծածկագրերի և կիրառվող սանկցիաների կառավարում

- Հաշվետվությունների գեներացում

2.5 ՎԻ – որոշումների կառավարման և վճարումների նույնականացման ենթահամակարգ

Հիմնական գործառույթներ՝
- Համակարգ ներմուծված որոշումների կառավարում
- ՎՎ Զրկումների կիրառում և ներմուծում Էլեկտրոնային ռեգիստր համակարգ
- Չնույնկանացված վճարումների կառավարում
- ԴԱՀԿ ուղարկված որոշումների կառավարում
- Օգտվողների դերերի և հասանելիությունների կառավարման ինչպես նաև նոր գործողության տեսակների ստեղծման կառավարման վահանակ
- Հաշվետվությունների գեներացում

2.6 Ինտեգրված համակարգերի և ՀՀ ՆԳՆ ՀՔԾՄԹԼ վարչության և ոստիկանության ՀՈԳՎ ՎԳ և ԲՔ վարչության – տեղեկատվությունների փոխանակման կենտրոնացված մոնիտորինգի ենթահամակարգ

Հիմնական գործառույթներ՝
- Ինտեգրված համակարգերի հետ փոխանակված տվյալների պահպանում և մոնիթորինգ
- Ինտեգրված համակարգերին գործողությունների տրամադրում և/կամ սահմանափակում
- Անվտանգության ապահովում

2.7 ՀԿԱԾ- ՀՀ ՆԳՆ ՀՔԾՄԹԼ վարչության և ոստիկանության ՀՈԳՎ ՎԳ և ԲՔ վարչության տվյալների փոխանակման ենթաբաղադրիչ

Հիմնական գործառույթներ՝
- ՀԿԱԾ և դատարան ուղարկման ենթակա որոշումների էլեկտրոնային առաքում,
- Տրանսպորտային մջոցների նկատմամբ կալանքների, հետախուզումների և այլ սահմանափակումների կիրառման և դրանց դադարեցման մասին տվյալների առցանց գրանցում:

2.8 Հայփոստ- Ոստիկանության ՀՀ ՆԳՆ ՀՔԾՄԹԼ վարչության տվյալների փոխանակման ենթաբաղադրիչ

Հիմնական գործառույթներ՝
- Քաղաքացիներին Վարչական իրավախախտումների մասին որոշումների ծանուցման վերաբերյալ տեղեկությունների գրանցում առցանց եղանակով:

2.9 ԱՊՊԱ պայմանագրերի մասին տեղեկությունների փոխանակման ենթաբաղադրիչ

Հիմնական գործառույթներ՝
- ՀՀ ԿԲ հետ ԱՊՊԱ պայմանագրերի տվյալների փոխանակում և տրանսպորտային միջոցների մասին տեղեկությունների տրամադրում:

2.10 ԲՊՈ և Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի հետ տեղեկությունների փոխանակման ենթաբաղադրիչ

Հիմնական գործառույթներ՝
- Սեփականության փոփոխության, գրավի և լիզինգի վկայականի տրամադրման, հաշվառման, ՎՎ – տրման և փոփոխությունների ինչպես նաև Վարչական տույժերի կիրառման գործնթացներում Ֆիզիկական և իրավաբանական անձանց նույնականացում:

2.11 «Բալային համակարգ»-ի տեղեկությունների փոխանակման ենթաբաղադրիչ

Հիմնական գործառույթներ՝
- Հաշվառման գործնթացում ՎՎ – ի կարգերի և ՏՄ-ի տեսակից կախված թույլատրելի կարգերի համեմատում ինքնաշխատ եղանակով
- Հաշվառման գործնթացում անձանց որպես շահառու գրանցում անհրաժեշտ փաստաթղթերի գեներացում և տվյալների ներմուծում «Բալային համակարգ»
- ՎՎ – բալերի վերականգնում քննության միջոցով
- «Բալային համակարգ» -ի կողմից կասեցված ՎՎ-ների վերականգնում քննության միջոցով
- ՎՎ-ների կարգավիճակների մասին տեղեկատվության տրամադրում «Բալային համակարգ» -ին ըստ ժամանակահատվածի

Վերոնշյալ համակարգերի և ռեգիստրների ծրագրային և տեխնիկական սպասարկումը ներառում են հետևյալ աշխատանքները՝

1. Շահագործման ընթացքում առաջացող տեխնիկական և ծրագրային խնդիրների շտկում, որոնք առաջացել են որպես հետևանք ծրագրային ապահովման կամ մարդկային սխալի(24/7 ռեժիմով):
2. Օրենսդրության, գերատեսչական հրամանների կամ կարգերի փոփոխման արդյունքում առաջացող անհրաժեշտ ծրագրային փոփոխությունների ներդնում,
3. ՏՀ անխափան աշխատանքի համար անհրաժեշտ ծրագրային փաթեթների (Linux, MySQL,PostgreSQL,Python, PHP, Apache,nginx) թարմացումների տեղադրում,
4. Այլ մարմինների հետ տվյալների փոխանակման և ներկայացման ընթացքում առաջացող խնդիրների լուծման աջակցություն,
5. ՀՀ ՆԳՆ ՀՔԾՄԹԼ վարչության և ոստիկանության ՀՈԳՎ ՎԳ և ԲՔ վարչության կողմից տրամադրվող ձևաչափերի համաձայն մինչև 2023թ. -ի գործող համակարգից հաշվետվությունների պատրաստում,
6. ՀՀ ՆԳՆ ՀՔԾՄԹԼ վարչության և ոստիկանության ՀՈԳՎ ՎԳ և ԲՔ վարչության տրամադրված տվյալների սահմաններում մինչև 2023թ. -ի գործող համակարգի տվյալների շտեմարաններում փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացնում,
7. Համակարգում առկա էլեկտրոնային ծառայությունների անխափան աշխատանքի ապահովում, անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային ծառայությունների ձևափոխում և լրացում,
8. Պատվիրատուի պահանջով համակարգում կատարված գործողությունների վերծանումների տրամադրում,

9. Ներդրված համակարգերի և տվյալների շտեմարանների աշխատանքի արդյունավետության և արագության մոնիթորինգ անհրաժեշտության դեպքում ռեսուրսների ավելացում և կրկնօրինակ սերվերների ստեղծում աշխատանքային բալանսավորման ապահովմամբ:

ՀՀ ՆԳՆ ՀՔԾՄԹԼ վարչության և ոստիկանության ՀՈԳՎ ՎԳ և ԲՔ վարչության համապատասխան ստորաբաժանման ներկայացմամբ բոլոր խնդիրների արձանագրում և տեխնիկական նկարագրության պատրաստում, համակարգերի նոր տարբերակների ստեղծման աշխատանքներում ներգրավելու նպատակով:

Մասնակիցը պետք է ունենա տեղեկատվական անվտանգության կառավարման ISO/IEC 27001:2013 ստանդարտին համապատասխանելիության հավաստագիր

Մասնակիցը պետք է ունենա բազմագծային հեռախոսակապով ապահովված զանգերի սպասարկման կենտրոն

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011049252
ՀՎՀՀ 02882913
հեռ. 010 59-60-21
էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

_____ Ա. Ֆիդանյան
/ ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար/
(ստորագրություն) Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474604404120000
ՀՎՀՀ 02679378
Հեռ. +374 44 001200
Էլ. Հասցեն՝ info@sempire.net

_____ Ն. Մակարյան
/տնօրեն/
(ստորագրություն) Կ.Տ

Digitally signed by
MAKARYAN NORIK 1110930445
Date: 2025-06-18 18:49:31

ք. Երևան ___ _____ 2025թ.

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը, հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 130, ի դեմս ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), ով գործում է ՀՀ Վարչապետի 2023 թվականի № 270-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Ն. Մակարյանի, (այսուհետ՝ Կատարող), ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, Պատվիրատուն և Կատարողն առանձին հիշատակման դեպքում այսուհետ նաև՝ «Կողմ», իսկ համատեղ՝ «Կողմեր»

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Պատվիրատուի կողմից Կատարողին թիվ ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2025/Լ-61 ծածկագրով էլեկտրոնային ռեգիստրի սպասարկման ծառայությունների պայմանագրի շրջանակներում, թվագրված 2025 թվականի հունիսի « »-ին (այսուհետ՝ Պայմանագիր), կարող են տրամադրվել գաղտնիք հանդիսացող տեղեկություններ, ինչպես նաև տեղեկություններ, որոնք Կատարողին կարող են հասանելի դառնալ բացառապես նախապայմանագրային հարաբերությունների, Պայմանագրի կնքման և դրա կատարման շրջանակներում,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Պատվիրատուն ցանկանում է պահպանել Կատարողին տրամադրված գաղտնիք պարունակող տեղեկությունների գաղտնիությունը, իսկ Կատարողը համաձայն է և ցանկանում է ստանձնել Պատվիրատուի գաղտնի տեղեկությունների չբացահայտման պարտավորությունը,

Կողմերը կնքեցին սույն համաձայնագիրը /այսուհետ՝ Համաձայնագիր/՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաձայնագրում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

«Գաղտնի տեղեկատվություն» - ցանկացած Կողմին ուղղակի կամ անուղղակի, գրավոր (նեռարյալ թվային կամ թղթային) կամ բանավոր, կամ էլ նյութական իրերի, ծրագրային ապահովումների հետազոտման ընթացքում տրամադրված ցանկացած տեղեկատվություն, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն, և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար, ներառյալ, առանց սահմանափակման, աշխատանքային նախագծերը, ֆինանսական տեղեկատվությունը, բիզնես նախագծերը, առևտրային գաղտնիքները, նոու-հաուները, ծրագրային ապահովումը և ելակետային կոդերը:

Այնուամենայնիվ, Գաղտնի Տեղեկատվություն հասկացությունն իր մեջ չի ներառում Պատվիրատուի կողմից Կատարողին տրամադրված այնպիսի տեղեկատվությունը, որը.

(ա) Նախապայմանագրային հարաբերությունների ընթացքում կամ Պայմանագրի կնքման պահին կամ դրանից հետո հանրամատչելի է դարձել առանց Կատարողի կողմից որևէ գործողության կամ անզգուշության,

(բ) ակնհայտորեն մշակվել է Կատարողի կողմից՝ առանց Գաղտնի տեղեկատվության օգտագործման,

(գ) Կատարողի կողմից օրինական կարգով ձեռք է բերվել երրորդ անձից՝ առանց դրա բացահայտման կամ օգտագործման սահմանափակման:

«Երրորդ անձ» - Համաձայնագրի կողմ չհանդիսացող ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Համաձայնագիրը կարգավորում է Կողմերի միջև նախապայմանագրային հարաբերությունների ընթացքում, ինչպես նաև Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքում Գաղտնի տեղեկատվության տրամադրման, փոխանցման, պահպանման և հրապարակման գործընթացը:

3. ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

3.1. Կատարողը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Գաղտնի տեղեկատվության պահպանությունն ապահովելու համար: Կատարողն իրավունք չունի ուղղակի կամ անուղղակի ձևով որևէ երրորդ անձի բացահայտել Պատվիրատուի կողմից տրամադրված կամ նրանից ստացված Գաղտնի տեղեկատվությունը:

3.2. Կատարողը ստանում և օգտագործում է Պատվիրատուի կողմից տրամադրված Գաղտնի տեղեկատվությունը բացառապես նախապայմանագրային հարաբերությունների նպատակների, ինչպես նաև Պայմանագրով նախատեսված իր պարտավորություններն իրականացնելու նպատակով:

3.3. Կատարողը կարող է գաղտնի տեղեկատվությունը միայն Պատվիրատուի հետ նախապայմանագրային հարաբերությունների, ինչպես նաև Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման շրջանակներում հաղորդել իր աշխատակիցներին, և միայն Պատվիրատուի համաձայնությամբ խորհրդատուներին, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին (դրանց պաշտոնատար անձանց) կամ ծառայությունների մատուցման համար Կատարողի կողմից ներգրավված Երրորդ անձանց կամ այն Երրորդ անձանց, որոնք ստանձնել են Համաձայնագրով նախատեսված գաղտնիության պահպանման պարտավորությանը էապես համանման պարտավորություն կամ այն Երրորդ անձի, ով նմանատիպ պարտավորություններ արդեն իսկ կրում է օրենքի կամ այլ իրավական ակտի համաձայն:

3.4. Կատարողը երաշխավորում և ապահովում է հետևյալը՝

3.4.1. չկրկնօրինակել Պատվիրատուի կողմից տրամադրված Գաղտնի տեղեկատվությունը՝ բացառությամբ Պատվիրատուի կողմից նախապես տրված գրավոր թույլտվության դեպքերի,

3.4.2. Պատվիրատուի պահանջով անհապաղ վերադարձնել ամբողջ Գաղտնի տեղեկատվությունը և դրա պատճենները և ոչնչացնել ամբողջ Գաղտնի տեղեկատվությունը և գրավոր հաստատել դրա ոչնչացման փաստը՝ Պատվիրատուի կողմից նման պահանջ ստանալուց հետո մեկամսյա ժամկետում,

3.4.3. Պատվիրատուին անհապաղ գրավոր կերպով տեղեկացնել այն դեպքերում, երբ ՀՀ գործող օրենսդրության համաձայն՝ Կատարողը պարտավոր է բացահայտել Գաղտնի տեղեկատվությունը կամ վերջինիս որևէ մաս,

4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Համաձայնագրով Կատարողի ստանձնած պարտավորությունների խախտման հետևանքով Կատարողի կողմից Գաղտնի տեղեկատվության չթույլատրված տարածման կամ բացահայտման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի՝

4.1.1. Դիմել ՀՀ իրավասու դատարաններում հասանելի պաշտպանության միջոցների,

4.1.2. Լուծել Կատարողի հետ կնքված Պայմանագիրը և/կամ Կատարողի նկատմամբ կիրառել տուգանք՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափով՝ Գաղտնի տեղեկատվության չթույլատրված տարածման կամ բացահայտման կամ Համաձայնագրով Կատարողի ստանձնած պարտավորությունների խախտման յուրաքանչյուր դեպքի համար:

4.2. Կատարողը պատասխանատվություն չի կրում այնպիսի տեղեկությունների բացահայտման համար.

(ա) որոնք հանրամատչելի են,

(բ) այն ծավալով, որով այդպիսի տեղեկատվությունը տրամադրվել է Կատարողին որևէ Երրորդ անձի կողմից, որը լիազորված է բացահայտել այդպիսի տեղեկատվությունը և որը Պատվիրատուի առջև չունի պարտավորություն՝ պահպանելու այդպիսի տեղեկատվության գաղտնիությունը,

(գ) որոնք Կատարողին բացահայտվում են Պատվիրատուի կողմից ուղղակի ցուցումով այն մասին, որ այդ տեղեկատվությունը գաղտնի չէ,

(դ) այն ծավալով, որով այդպիսի տեղեկատվությունը կօգտագործվի Կատարողին աջակցելու համար՝ Կատարողի նկատմամբ վարվող կամ ներկայացված որևէ հայցից կամ քննությունից պաշտպանվելու նպատակով:

5. ԺԱՄԿԵՏ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

5.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է Կողմերի միջև Պայմանագրի կնքման դեպքում, այդ Պայմանագրի գործողության ժամկետի ողջ ընթացքում, ինչպես նաև դրա դադարումից (լուծումից) հետո:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Համաձայնագիրը կազմված է և գործում է ՀՀ օրենսդրության համաձայն:

6.2. Համաձայնագիրը կնքված է հայերենով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011049252
ՀՎՀՀ 02882913
հեռ. 010 59-60-21
էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

_____ Ա. Ֆիդանյան
/ ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար/
(ստորագրություն) Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474604404120000
ՀՎՀՀ 02679378
Հեռ. +374 44 001200
Էլ. Հասցեն՝ info@sempire.net

_____ Ն. Մակարյան
/տնօրեն/
(ստորագրություն) Կ.Տ

Digitally signed by
MAKARYAN NORIK 111093044
Date: 2025-06-18 18:50:28

Հավելված N 2
« » 2025թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2025/L-61 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	*72411800/2*	*Էլեկտրոնային ռեգիստրի սպասարկում*	-	-	-	-	-	22200000	22200000	22200000	22200000	22200000	22200000	22200000	**22 200 000**

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011049252
ՀՎՀՀ 02882913
հեռ. 010 59-60-21
էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

_____ Ա. Ֆիդանյան
/ ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար/
(ստորագրություն) Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474604404120000
ՀՎՀՀ 02679378
Հեռ. +374 44 001200
Էլ. Հասցեն՝ info@sempire.net

_____ Ն. Մակարյան
/տնօրեն/
(ստորագրություն) Կ.Տ

Digitally signed by
MAKARYAN NORIK 111093044!
Date: 2025-06-18 18:51:42

Հավելված 3
« » 2025 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2025/L-61 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2025 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2025/L-61 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
« » 2025 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2025/L-61 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.

FIDANYAN ARA
3108790099

Digitally signed by
FIDANYAN ARA
3108790099
Date: 2025.06.19
15:05:19 AMT